

ԳԱՌԻՍ



Ժամանակակիցները Գաուսին անվանում էին մաթեմատիկայի արքա: Նա ծնվել է Գերմանիայի Բրաունշվեյգ քաղաքում, փակա-նակագործի ընտանիքում: Դեռևս մանուկ Գաուսը ցուցաբերում էր հաշվումներ կատարելու զարմանալի ընդունակություններ: Հետագայում նա կասեր. «Ես ավելի շուտ հաշվել եմ սովորել, քան խոսել»: Մի անգամ Գաուսի հայրը բան-վորների վճարը տալու համար երկար հաշվումներ կատարեց՝ մինչև ուշ գիշեր: Վճարը բավականին շատ էր և այդ մասին նա իր դժգոհությունը հայտնեց կնոջը: Պարզվեց, որ եռամյա Գաուսը դեռ չէր քնել և հետևում էր հոր հաշվումներին: Նա ասաց, որ հայրը սխալ է հաշվել և նշեց ավելի փոքր թիվ: Հայրը զայրացավ որդու վրա, բայց մի անգամ ևս կատարեց իր հաշվարկը: Եվ որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ արդյունքում ստացավ որդու նշած թիվը:

Դպրոցում Գաուսը առանձնապես աչքի չէր ընկնում, և իր ուսուցիչ Բյուտների մտրակը հաճախ էր բաժին հասնում նաև նրան: Սակայն պատկերը կտրականապես փոխվեց, երբ սկսվեցին թվաբանության դասերը: Գաուսը ցուցաբերեց հաշվումներ կատարելու այնպիսի արագություն, որ ապշեցրեց թե՛ ընկերներին, թե՛ ուսուցչին: Իսկ մի անգամ, երբ աշակերտներին երկար ժամանակով զբաղեցնելու նպատակով Բյուտները գրատախտակին գրեց $1 -ից մինչև 100$ թվերի գումարը, պահանջեց հաշվել այն և քայլերն ուղղեց դեպի դուռը՝ որոշ ժամանակով իր մոտ եկած գործընկերոջ հետ զրուցելու, լավեց Գաուսի ձայնը. «Ես արդեն հաշվել եմ»: Ուսուցիչը զայրացավ և պահանջեց ավելի լուրջ մոտենալ առաջադրված դժվարին խնդրի լուծմանը: Սակայն Գաուսը անհողդողդ էր. «Ես լուծել եմ», - կրկնեց նա: Ուսուցիչը զսպեց զայրույթը և որոշեց անհնազանդ աշակերտին պատժել գրավոր աշխատանքները ստուգելուց հետո: Սակայն նրա զայրույթը փոխվեց հիացմունքի, երբ տեսավ Գաուսի պարզ ու սրամիտ լուծումը: Գաուսը նկատել էր, որ $1 + 2 + 3 + \dots + 98 + 99 + 100$ գումարի ծայրերից հավասարահեռ անդամների $1 + 100, 2 + 99, 3 + 98, \dots$ գումարները իրար հավասար են և դրանց թիվը 50 է: Հետևապես՝ նրանց գումարը կլինի $50 \cdot 101$ կամ 5050 :

Իհարկե, այս դեպքից հետո Գաուսի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Հետագայում Գյոթինգենի համալսարանի երկրորդ կուրսի ուսանող, 19-ամյա Գաուսը կարողացավ կարկինով և քանոնով կառուցել կանոնավոր 17-անկյունը, խնդրին տալով ինքնատիպ և փայլուն լուծում: Գաուսը կատարեց նաև բազմաթիվ այլ հայտնագործություններ մաթեմատիկայի բազմաթիվ բնագավառներում. ապացուցեց հանրահաշվի հիմնական թեորեմը. ցույց տվեց, որ մեկ փոփոխականի կամայական բազմանդամն ունի արմատ և այլն, և այլն: Սակայն ինքը բոլորից շատ զնահատում էր իր առաջին հայտնագործությունը: Եվ իր ցանկությամբ նրա գերեզմանի վրա փորագրված է կանոնավոր 17-անկյուն՝ ի նշան նրա հրաշալի հայտնագործության: